ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԶՎԱՐԹՆՈՑ»
ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ

N 1-146

«30» Մայիսի 2025թ.

«ԱՆԺ» ՍՊԸ-ի տնօրեն
տիկին Շուշան Թարվերդյանին
ք.Երևան, Կիևյան 22

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԱՆԺ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2025 թվականի ապրիլի 21-ին կնքվել է «ԶԱՕԿ-ԳՀ-ԱՇՁԲ-25/12» ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Համաձայն Պայմանագրի 1.1 կետի՝ Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Շենքի վերակառուցման աշխատանքներ»-ը (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Համաձայն Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՆԺ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, և հիմք ընդունելով Պայմանագրի 8.9 կետը՝ Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պայմանագրի կատարման ապահովման գումարը, ինչը կազմում է 240 000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 360

ԶՎԱՐԹՆՈՑ
ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

0042 ք.Երևան, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան,
նախկին ԲՍ համալիր թիվ 2
Էլ-փոստ: info@zamc.am, Վեբ կայք: www.zamc.am
Հեռ. (+374) 060 37 33 60, Ֆաքս: (+374) 060 37 33 60

000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև Պայմանագրի 6.3 կետով նախատեսված և հաշվարկված տուգանքի գումարը՝ 9 900 (ինը հազար ինը հարյուր, հաշվարկը՝ 1 980 000 x 0.5%) ՀՀ դրամի չափով, անհրաժեշտ է վճարել ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 հաշվեհամարին և «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ-ը ներկայացնել վճարման անդորրագրերի պատճենները կամ դրանք տրամադրել info@zamc.am էլեկտրոնային փոստի հասցեով:

Նշված ժամկետում գանձապետական հաշիվներին ապահովումները չփոխանցելու դեպքում կձեռնարկվեն միջոցներ՝ միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների հիման վրա գանձումները կատարելու և գնումներին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում՝ Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

ա) լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները, ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

բ) մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Հարգանքով՝

Թաթուլ Հայրապետյան

ԶՎԱՐԹՆՈՑ
ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

0042 ք.Երևան, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան,
նախկին ԲՍ համալիր թիվ 2
Էլ.փոստ: info@zamc.am Վեբ կայք: www.zamc.am
Հեռ. (+374) 060 37 33 60 Ֆաքս: (+374) 060 37 33 60